<p>7.2. Մատակարարը պարտավոր է վերացնել ցանկացած թերություն կամ ոչ պատշաճ դիզայնից, աշխատուժի կամ նյութերի պատճառով առաջացած անհամապատասխանություն, որոնք մաշվածության կամ Ապրանքների ոչ պատշաճ օգտագործման կամ Մատակարարի գրավոր հրահանգին ոչ համապատասխան օգտագործման հետևանքով առաջացած թերություններ չեն:</p>	<p>7.2. The Supplier shall remedy any Deficiency or non-conformity resulting from faulty design, materials or workmanship, other than defects resulting from wear and tear or improper use of the Goods or use of the Goods other than in accordance with the written instructions of the Supplier.</p>
<p>7.3. Երբ վերացվում են Ապրանքի մի մասի և/կամ բաղադրատարրերի թերությունները, Մատակարարը պատասխանատվություն է կրում վերանորոգված կամ փոխարինված Ապրանքի և/կամ դրա բաղադրատարրերի թերությունների համար, բնօրինակ Ապրանքների համար կիրառելի նույն կարգով և պայմաններով:</p>	<p>7.3. Where the defects in a part and/or components of the Goods have been remedied, the Supplier shall be liable for defects in the repaired or replaced part and/or component under the same terms and conditions as those applicable to the original Goods.</p>
<p>7.4. Մատակարարը երաշխավորում է Գնորդի կողմից Ապրանքների ստացումը սույն Պայմաններով և Պայմանագրով չնախատեսված ցանկացած այլ պարտադիր վճարումներից, երրորդ անձանց իրավունքներից և պահանջներից զերծ: Ապրանքների հետ կապված Գնորդին կամ դրա գործընկերներին ուղղված երրորդ անձանց ցանկացած պահանջի դեպքում, որը կապված է նրանց պատենտի/ մտավոր սեփականության իրավունքի խախտման հետ, Մատակարարը պարտավորվում է հատուցել Գնորդին</p>	<p>7.4. The Supplier guarantees to the Buyer reception of the Goods free from any other mandatory payments not stipulated in this Terms and the Agreement and free against the rights and claims of the third parties. In case of any claims of the third parties to the Buyer or its clients following from infringement of their patent/intellectual property rights connected with the Goods, the Supplier undertakes to compensate to the Buyer all losses and the charges suffered by it or its clients in connection with infringement of such rights,</p>

<p>վերջինիս կամ նրա գործընկերների կրած բոլոր կորուստները և ծախսերը կապված նման իրավունքների խախտման հետ, և Մատակարարի միջոցների հաշվին և ռիսկով ապահովել բոլոր առկա պահանջների լուծումը:</p>	<p>and at own expense and the risk to arrange to settlement of the declared claims.</p>
<p>7.5. Մատակարարը երաշխավորում է, որ Պայմանագրի հիման վրա Գնորդին վաճառված Ապրանքները չեն առաքվի ցանկացած երրորդ անձի առանց Գնորդի գրավոր հաստատման:</p>	<p>7.5. The Supplier guarantees that the Goods, sold to the Buyer under the Agreement will not be delivered to any other party without a written approval of the Buyer.</p>
<p>7.6. Մատակարարը պարտավորվում է ըստ կիրառելիության տրամադրել Գույքին առնչվող ծագման սերտիֆիկատներ, որակի և ապահովության սերտիֆիկատներ: Սերտիֆիկատները կտրամադրվեն Մատակարարի միջոցների հաշվին, եթե այլ բան չի համաձայնեցվել Կողմերի միջև գրավոր կերպով:</p>	<p>7.6. The Supplier undertakes to provide where applicable certificates of origin, quality and safety certificates pertaining to the Goods. The certificates shall be provided at the expense of the Supplier unless otherwise agreed between the Parties in writing.</p>
<p>7.7. Մատակարարը պարտավորում է ամբողջությամբ փոխհատուցել, ապահովելով փոխհատուցումը Գնորդին, բոլոր կորուստները, ծախսերը, պահանջները, ծախսերը և պարտավորությունները, որոնք կառաջանան ցանկացած երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքների և հեղինակային իրավունքի կամ կոնֆիդենցիալության ցանկացած խախտման կամ հնարավոր խախտման հետ կապված:</p>	<p>7.7. The Supplier shall fully indemnify and shall keep the Buyer indemnified against all losses, costs, claims, demands, expenses and liabilities arising out of or in connection with the infringement or alleged infringement of any third party's intellectual property rights and copyright or any breach of confidentiality.</p>
<p>7.8. Մատակարարը պարտավոր է կրել ամբողջական պատասխանատվություն և հատուցել Գնորդին հասցված վնասները, եթե Մատակարարի կողմից խախտվել է կամ չի իրականացվել սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված երաշխիքի վերաբերյալ դրույթները:</p>	<p>7.8. The Supplier shall bear full responsibility and shall keep the Buyer indemnified against all losses, in case of breach or default of the representations or warranties set forth in this Terms and the Agreement.</p>
<p>7.9. Մատակարարը պարտավոր է կրել ամբողջական պատասխանատվություն և հատուցել Գնորդին հասցված վնասները, եթե Մատակարարի կողմից խախտվել է, կամ իրականացվել է ոչ պատշաճ, կամ չի իրականացվել սույն Պայմանների և Պայմանագրի պայմանները, ներառյալ՝ մատակարարման ուշացումը:</p>	<p>7.9. The Supplier shall bear full responsibility and shall keep the Buyer indemnified against all losses, in case of Supplier's breach or negligent performance or failure in performance of the terms of this Terms and the Agreement including due to the delay in delivery.</p>
<p>7.10. Մատակարարն ընդունում է, որ սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված ցանկացած իրավունք հանդիսանում է լրացում և ոչ մի դեպքում չի սահմանափակում կիրառելի օրենսդրությամբ սահմանված իրավունքները և հատուցումները: Միևնույն ժամանակ Մատակարարը չի կարող փոխանցել սույն Պայմանագրից բխող իր իրավունքները և պարտականությունները (ներառյալ՝ փոխանցել պարտքը) ցանկացած այլ անձի՝ առանց Գնորդի գրավոր համաձայնության:</p>	<p>7.10. The Supplier shall agree that any rights granted under this Terms and the Agreement are in addition to and not exclusive of any rights or remedies provided by applicable laws. At the same time the Supplier cannot transfer rights and responsibilities raising from the Agreement (including debt transfer) to any other party – without written agreement of the Buyer.</p>
<p>7.11. Կողմերն ընդունում են, որ Մատակարարի մայր կազմակերպությունը համապարտ և լիակատար պատասխանատվություն է կրում Մատակարարի բոլոր դուստր կազմակերպությունների հետ:</p>	<p>7.11. The Parties agree that the parent entity of the Supplier shall undertake joint and several liabilities with all Supplier affiliates.</p>
<p>7.12. Մատակարարը երաշխավորում է, որ իրավասու է կնքել Պայմանագիրը և իրականացնել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:</p>	<p>7.12. The Supplier guarantees that it has the authority to enter into and perform the Agreement.</p>
<p>8. ԱՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՄՆՈՒՄ</p>	<p>8. INSPECTION AND ACCEPTANCE</p>
<p>8.1. Պայմանագրի հիման վրա մատակարարված Ապրանքների մաքսազերծումից հետո կամ դրա ընթացքում և մինչև կոնկրետ Պատվերով սահմանված Ապրանքի ընդունումը, Գնորդը իրականացնում է</p>	<p>8.1. After or during customs clearance of the Goods delivered based on the Agreement and before final acceptance of the Goods, defined by the precise Order, the Buyer shall perform their inspection and testing to</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
 Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>Ապրանքի ստուգում և փորձարկում ստուգելու Ապրանքի համապատասխանությունը սույն Պայմանագրին, Պայմանագրին, համապատասխան հավելվածին, Պատվերին Գնորդի պահանջներին և դրանում թերությունների կամ անհամապատասխանության առկայությունը/բացակայությունը:</p>	<p>check the compliance of the Goods to this Terms, the Agreement, appropriate appendix, Order, Buyer's requirements and for availability/absence of the Deficiencies or non-compliance.</p>
<p>8.2. Մատակարարված Ապրանքների ցանկացած պակասորդի, չմատակարարված միավորի կամ ցանկացած թերությամբ միավորի առկայության դեպքում, որը կբացահայտի ստուգման ընթացքում, Գնորդի կողմից կկազմվի և կստորագրվի մանրամասն տվյալներով արձանագրություն/փաստաթուղթ: Այս փաստաթղթի հիման վրա Մատակարարը կփոխարինի կամ կառաքի կամ կվերանորոգի ցանկացած բացակայող կամ թերությամբ Ապրանք: Մատակարարը պարտավոր է փոխարինել կամ առաքել կամ վերանորոգել ցանկացած Ապրանք, որը թերությամբ է կամ առկա չէ, Կողմերի կողմից յուրաքանչյուր համապատասխան Պատվերում սահմանված ժամկետում և Գնորդի միանձնյա ընտրությամբ և հայեցողությամբ: Եթե համապատասխան Պատվերում հատուկ ժամկետ սահմանված չէ, ապա Մատակարարը պարտավոր է փոխարինել կամ մատակարարել կամ վերանորոգել ցանկացած բացակայող կամ թերությամբ Ապրանք՝ դրանք ստանալուց հետո 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում: Եթե Մատակարարի ներկայացուցիչները և Գնորդը համաձայնության չեն գալիս ստուգման արձանագրության/ փաստաթղթի վերաբերյալ, ապա երրորդ կողմը լիազորվում է Մատակարարի և Գնորդի կողմից կրկին ստուգում իրականացնել: Նշված երրորդ անձի կողմից տրված ստուգման վկայականը պարտավորեցնող կլինի երկու Կողմերի համար: Եթե Կողմերը չեն գալիս համաձայնության այդպիսի երրորդ կողմի ընտրության հարցում, ապա Գնորդի կողմից կազմված ստուգման արձանագրությունը/փաստաթուղթը համարվում է պարտավորեցնող երկու Կողմերի համար:</p>	<p>8.2. Should there be found any shortage, missing item, damaged item or item with any Deficiency in the delivered Goods during the inspection, a detailed record/document shall be made and signed by the Buyer. Based on this document the Supplier shall replace or deliver or repair any Goods found missing or defective. The Supplier shall replace or deliver or repair any missing or defective Goods within the period specified by the Parties in each respective Order hereto for the occasion and on the Buyer's sole choice and discretion. If there is not defined specific term in the respective Order the Supplier shall be obliged to replace or deliver or repair any Goods found missing or defective within 20 (twenty) calendar days after their receipt. If the representatives of the Supplier and the Buyer cannot reach an agreement on the inspection record/document, a third party shall then be entrusted by the Supplier and the Buyer to make inspection again. The inspection certificate issued by that third party will be binding upon both Parties. If the Parties cannot reach agreement on the choice of such third party, than the inspection report/document concluded by the Buyer shall be binding for both Parties.</p>
<p>8.3. Վերոնշյալ ստուգումն իրականացնելու ժամկետը 30 (երեսուն) օր է, Ապրանքը Գնորդի մոտ (մաքսազերծումից հետո) հետևյալ հասցեով ստացվելուց հետո՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Թբիլիսյան խճ., Նրբանցք 8/3, եթե այլ հասցե մատնանշված չէ համապատասխան Պատվերով: Եթե Գնորդի չի կարողանում իրականացնել ստուգումը ժամանակին, ապա ստուգման համար նախատեսված ժամանակը կարող է երկարացվել Կողմերի համաձայնությամբ: Եթե Կողմերի միջև ժամկետի երկարացում չի փոխհամաձայնեցվել, ապա վերոնշյալ ստուգումը կհամարվի բավարար կերպով իրականացված վերոնշյալ 30 (երեսուն) օրացուցային օրերի ժամկետը լրանալուց հետո:</p>	<p>8.3. The time limit of the above mentioned inspection is 30 (thirty) days as of the date of the Goods arrival at the Buyer's Site (after customs clearance) at the address: 8/3 lane, Tbilisyan Highway, Yerevan city, Republic of Armenia, if another address is not indicated in the relevant Order. Should the Buyer fail to make the inspection in time, the time limit can be prolonged upon mutual agreement of the Parties. If no time extension has been mutually agreed upon, the above mentioned inspection shall be considered to be completed satisfactorily upon expiry of said 30 (thirty) calendar day period.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>8.4. Գնորդն իրավասու է չընդունել Ապրանքները կամ դրանց մի մասը՝ ա/ որի որակը/ քանակը/ տեսականին չի համապատասխանում Կողմերի միջև փոխհամաձայնեցվածին; բ/ մատակարարվել են համապատասխան Պատվերով սահմանված ժամկետների և պայմանների խախտմամբ, նկատի ունենալով, որ կետանցը ավելին է, քան համապատասխան Պատվերով կամ Պայմանագրով սահմանված ժամկետներից 15 (տասնհինգ) օրացուցային օր:</p>	<p>8.4. The Buyer has a right not to accept and not to pay for the Goods or its' part: (a) quality / quantity / variety which does not meet the requirements agreed upon by the Parties. (b) Supplied otherwise in deviation of terms and conditions defined by the respective Orders, provided that the delay is more than 15 (fifteen) calendar days from the date specified in the respective Orders.</p>
<p>8.5. Հանձնման-Ընդունման Ակտը ստորագրվում է, եթե Ապրանքը տրամադրվել է պատշաճ և ամբողջությամբ, ներառյալ բոլոր հայտնաբերված Թերությունների վերացումը:</p>	<p>8.5. Acceptance Certificate shall be signed if the Goods are delivered properly and in full, including elimination of all discovered Deficiencies.</p>
<p>8.6. Կողմերը համաձայնում են, որ Գնորդն իրավունք ունի ընդունել Ապրանքների միայն մի մասը, որը համապատասխանում է սույն Պայմանների և Պայմանագրի դրույթներին և Ապրանքներին ներկայացվող պահանջներին և ստորագրել միայն ընդունված Ապրանքների վերաբերյալ Հանձնման-Ընդունման Ակտ:</p>	<p>8.6. The Parties mutually agree, that the Buyer is entitled to accept only part of the Goods' corresponding to the provisions of this Terms and the Agreement and requirements of the Goods' and to sign Acceptance Certificate only towards the accepted Goods.</p>
<p>8.7. Ապրանքների ընդունումը չի սահմանափակում Գնորդի իրավունքները երաշխիքային սպասարկման հետ կապված:</p>	<p>8.7. The acceptance of the Goods shall be without prejudice to warranty rights of the Buyer under the Agreement.</p>
<p>8.8. Այն դեպքերի համար, երբ Ապրանքներն ունեն ցանկացած Թերություն, անհամապատասխանություն և ենթակա են վերանորոգման, Կողմերը փոխադարձաբար համաձայնում են, որ ի հավելումն այն տարբերակի, որ նման Ապրանքները կարող են ուղարկվել Մատակարարին սույն Պայմաններին և Պայմանագրի պայմաններին համապատասխան, Գնորդն իրավունք ունի հանձնարարել Ապրանքների վերանորոգումը երրորդ անձի և պահանջել նման վերանորոգման հետ կապված բոլոր ծախսերի հատուցումը Մատակարարից, Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության հիման վրա:</p>	<p>8.8. For the cases when the Goods have any Deficiencies, deviations and need to be repaired, the Parties mutually agree, that in addition to the option that such Goods can be sent to the Supplier in accordance with the terms of this Terms and the Agreement, the Buyer is entitled to assign Goods' repair to the third party and demand all costs related to such repair from the Supplier, based on mutual written consent of the Parties.</p>
<p>8.9. Կողմերը փոխադարձաբար համաձայնում են, որ այն դեպքում երբ Ապրանքները սույն Պայմանների և Պայմանագրի հիման վրա ենթակա են վերանորոգման կամ փոխարինման Մատակարարի միջոցների հաշվին, Մատակարարը կրում է նման Ապրանքների արտահանման, ներմուծման, վերաարտահանման, վերաներմուծման և փոխադրման հետ կապված ծախսերն ամբողջությամբ:</p>	<p>8.9. Parties mutually agree, that in case the Goods are subject to replacement or repair on the Supplier's costs based on this Terms and the Agreement, the Supplier bears full costs related to export, import, re-export, re-import and transportation of such Goods.</p>
<p>8.10. Կողմերը փոխադարձաբար համաձայնում են, որ Ապրանքները Գնորդի կողմից ոչ պատշաճ օգտագործման արդյունքում փոխարինման կամ վերանորոգման անհրաժեշտության դեպքում, Գնորդը կրում է նման Ապրանքների արտահանման, ներմուծման, վերաարտահանման, վերաներմուծման և փոխադրման հետ կապված ծախսերն ամբողջությամբ:</p>	<p>8.10. The Parties mutually agree, that in case of need of replacement or repair of the Goods caused by the improper usage of them by the Buyer, the Buyer bears full costs related to export, import, re-export, re-import and transportation of such Goods.</p>
<p>8.11. Ցանկացած ժամանակ, Գնորդի անունից Մատակարարին նախնական ծանուցմամբ կամ առանց ծանուցման, Գնորդը և/կամ իր ներկայացուցիչները, խորհրդատուները, աշխատողները կամ դուստր ընկերությունները, որոնք պատկանում են Կոկա-Կոլա Ֆելչենիկ ԸՆկերությունների խմբին իրավասու են իրականացնել ստուգում, որպեսզի ստուգեն</p>	<p>8.11. At any time with or without prior notification on behalf of the Buyer to the Supplier the Buyer and/or its representatives, advisers, employees or affiliates belonging to the Coca-Cola Hellenic Group of companies may execute an audit to review the Supplier's compliance to this Terms, Agreement, Buyer's policies and procedures. Such audit activities</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
 Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>Մատակարարի համապատասխանությունը սույն Պայմանագրին, Պայմանագրին, Գնորդի քաղաքականություններին և ընթացակարգերին: Նման ստուգման գործողությունների ընթացքում Մատակարարը պետք է աջակցություն ցուցաբերի, ապահովի լիարժեք և անվերապահ համագործակցություն: Գնորդի միտումն է, որ նման հայտարարված և/կամ չհայտարարված ստուգումները չստեղծեն ավելորդ ծանրաբեռնվածություն Մատակարարի համար, այնուամենայնիվ, Մատակարարը չի կարող օգտագործել իրականացված ստուգումների փաստը որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման անհնարինություն՝ սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված դրույթներին համապատասխան:</p>	<p>are to be fully supported by the Supplier and full and unconditional cooperation is to be provided. It is the Buyer's intention that such announced and/or unannounced audits should not create unnecessary burdens on the Supplier, however the Supplier may not use the fact of the audits conducted as reasoning for not being able to fulfill the obligations undertaken under the Agreement according to this Terms and the Agreement in full.</p>
<p>8.12. Գնորդը, որն Ապրանքներն ընդունելուց հետո դրանցում հայտնաբերել է Պայմանագրից շեղումներ կամ թերություններ, որոնք չէին կարող բացահայտվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ)՝ ներառյալ այնպիսիք, որոնք Մատակարարը դիտավորյալ թաքցրել է, պարտավոր է դրանք հայտնաբերելուց հետո՝ ողջամիտ ժամկետում, այդ մասին հայտնել Մատակարարին:</p>	<p>8.12. In case when the Buyer after receiving of the Goods, finds out in the Goods discrepancies and/or deficiencies from the Agreement, which were not revealed during the usual way of acceptance (hidden deficiencies) including those, which the Supplier intentionally hid, than the Buyer is obliged to notify the Supplier regarding it within reasonable period.</p>
<p>9. ԵՐԱՇԽԻՔ</p>	<p>9. WARRANTY</p>
<p>9.1. Մատակարարը երաշխավորում է Գնորդին իր բոլոր պայմանագրային պարտավորությունների կատարումը, ի թիվս այլոց, հետևյալ պարտավորությունների՝ 1/ Ապրանքները պետք է մատակարարվեն Պայմանագրի հավելվածներին, Պատվերներին համապատասխան առաքման ժամկետներում և քանակներով, 2/ Ապրանքները կմատակարարվեն առանց որևէ թերության:</p>	<p>9.1. The Supplier guarantees to the Buyer performance of all of his contractual obligations including, inter alia, the following obligations: (1) the Goods shall be shipped in during the delivery period and in quantities according to appendixes, Orders to the Agreement; and (2) the Goods shall be shipped free from any defects.</p>
<p>9.2. Պայմանագրով մատակարարվող Ապրանքի և դրա բաղկացուցիչ մասի/մասերի/ համար երաշխիքային ժամկետ, այսուհետ՝ Երաշխիքային ժամկետ, սահմանվում է Պայմանագրի համապատասխան Պատվերով, որի հաշվարկը սկսվում է Հանձնման-Ընդունման Ակտը ստորագրելու պահից:</p>	<p>9.2. The warranty period, hereinafter the “Warranty Period”, for the Goods supplied under the Agreement is defined in respective Order hereto, which is calculated upon Acceptance Certificate signing.</p>
<p>9.3. Երաշխիքային ժամկետը ներառում է նաև դրա բոլոր երկարացումները, եթե այդպիսիք անհրաժեշտ են Պայմանագրի համաձայն Ապրանքների թերությամբ մասերի համար: Երաշխիքը վերաբերում է Ապրանքներին, և, եթե վերաբերելի է, դրանց բաղադրամասերին և/կամ նյութին:</p>	<p>9.3. The Warranty Period shall include all its extensions if such are required hereunder in respect of defected parts of the Goods. The warranty shall cover the Goods and, if applicable, components and/or material of the Goods.</p>
<p>9.4. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում Գնորդը հայտնաբերում է ցանկացած թերություններ կամ թերացումներ, ներառյալ բայց չսահմանափակվելով Ապրանքների քանակը և որակը, ստանդարտներին անհամապատասխանությունը, հաշվարկների թերացումները, Մատակարարը պարտավոր է փոփոխել և վերացնել նման թերությունները կամ թերացումներն իր հաշվին և միջոցներով:</p>	<p>9.4. If during the Warranty Period the Buyer reveals any defects or defaults including but not limited to quantities and qualities of the Goods, non-compliance with the standards, defects in calculation, the Supplier shall modify and remove such defects or defaults at its' own costs and expenses.</p>
<p>9.5. Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը պարտավոր է՝</p>	<p>9.5. Within Warranty Period the Supplier is obliged to:</p>
<p>9.5.1. Վերացնել Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի թերություն:</p>	<p>9.5.1. eliminate Deficiencies of any kind, nature, form of the Goods or of any part thereof;</p>



Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

Table with 2 columns containing numbered clauses (9.5.2-9.11) and a section header (10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ) with corresponding English text.

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>կետանցը գերազանցի 10 (տասը) օրացուցային օրը, ապա Մատակարարը պարտավոր է Գնորդի առաջին գրավոր պահանջի դեպքում վճարել Գնորդին տուգանք՝ կետանցված Ապրանքի գնի 0,06 տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ սկսած նման կետանցի տասներորդ օրվանից: Ի հավելումն Գնորդն իրավասու է՝</p> <p>ա) հրաժարվել ընդունել Մատակարարի կողմից հետագայում մատակարարվող Ապրանքը</p> <p>բ) այլ մատակարարի հանձնարարել Ապրանքների մատակարարման իրականացումը (և պահանջել հատուցել Մատակարարից ցանկացած լրացուցիչ ծախս, որն առաջացել է մատակարարումը Մատակարարի փոխարեն այլ երրորդ կողմի հանձնարարելու հետևանքով)</p> <p>գ) Մատակարարին ենթարկել պատասխանատվության ցանկացած վնասի կամ լրացուցիչ ծախսի համար, և</p> <p>դ) վերադարձնել Գնորդի կողմից Մատակարարին չմատակարարված Ապրանքների համար նախկինում վճարված գումարը:</p>	<p>penalty in the amount of 0,06% of the price of the Goods delayed per each day of delay starting on the 10th day of such delay. In addition, the Buyer may:</p> <p>a) refuse to accept the Goods later supplied by the Supplier;</p> <p>b) assign another supplier to supply the Goods [and reclaim from the Supplier any additional costs incurred as a result of procuring supply from a third Party instead of the Supplier];</p> <p>c) hold the Supplier accountable for any loss and additional costs incurred; and</p> <p>d) have any sums previously paid by the Buyer to the Supplier for Goods not supplied by the Supplier.</p>
<p>10.3. Ի հավելումն սույն Պայմանների 10.2. կետով սահմանված տուգանքների՝ Մատակարարը պարտավոր է հատուցել Գնորդին բոլոր վնասները և ծախսերը, որոնք Գնորդը կրում է Ապրանքների մատակարարման կետանցի արդյունքում:</p>	<p>10.3. In addition to the penalties mentioned in clause 10.2. hereof the Supplier shall reimburse to the Buyer all the damages and expenses the Buyer incurs in connection with the delay of the Goods delivery.</p>
<p>10.4. Գնորդն իրավասու է նվազեցնել համապատասխան հավելվածների հիման վրա վճարման ենթակա Ապրանքների գինը սույն Պայմաններով սահմանված տուգանքների չափով: Սույնով Մատակարարն աներկբա կերպով տալիս է իր համաձայնությունը դրա համար, այդպիսի ամեն դեպքի համար:</p>	<p>10.4. The Buyer has a right to unilaterally decrease or deduct the price of the Goods to be paid according to the relevant appendixes hereto for the amount of penalties stipulated hereby. The Supplier hereby gives its irrevocable explicit consent for this for every such case.</p>
<p>10.5. Եթե Մատակարարը կետանցի Ապրանքների մատակարարումը Պայմանագրի համապատասխան Պատվերում սահմանված Ապրանքների մատակարարման ժամկետից ավելի քան 20 (քսան) օրացուցային օրով, ապա Գնորդն իրավունք ունի փակողմանիորեն դադարեցնել Պայմանագիրը տվյալ համապատասխան Պատվերի մասով՝ ուղարկելով այդ մասին գրավոր ծանուցում Մատակարարին: Այս դեպքում Մատակարարը պետք է հատուցի Գնորդի բոլոր վնասները և ծախսերը, որոնք Գնորդը կրել է կետանցի հետևանքով և պետք է հետ պահանջի համապատասխան Պատվերի հիման վրա Գնորդի կողմից վճարված ամբողջ գումարը, եթե այդպիսին առկա է:</p>	<p>10.5. Should the Supplier delay the Goods supply fully or partially for more than 20 (twenty) calendar days as of the day of the Goods supply mentioned in respective Order hereto the Buyer shall have a right to unilaterally terminate the Agreement in part relevant to respective Order hereto by sending written notice to the Supplier. In this case the Supplier shall reimburse to the Buyer all the damages and expenses the Buyer incurs in connection with the delay and shall revert all amounts if prepaid by the Buyer under concerned Order.</p>
<p>10.6. Ապրանքների մատակարարումը որակի/ ամբողջականության/ տեսականու/ փաթեթավորման պահանջների անհամապատասխանությամբ (Կողմերի կողմից համապատասխան Պատվերում սահմանված պահանջների և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համադրմամբ) իրականացնելու դեպքում Մատակարարը պարտավոր է Գնորդին վճարել տույժ ոչ պատշաճ որակի/ ամբողջականության/ տեսականու/ փաթեթավորման Ապրանքների գնի 10 (տասը) տոկոսի չափով և պարտավոր է Գնորդին փոխհատուցել բոլոր վնասները և ծախսերը, որոնք առաջացել են կամ կառաջանան նման</p>	<p>10.6. In case of supply of the Goods with deviation in quality/ completeness/ assortment/ packaging requirements (vis-à-vis the requirements agreed by the Parties in relevant Order hereto and/or legislation of the Republic of Armenia) the Supplier shall pay to the Buyer fine in the amount of 10% (ten percent) of the cost of the Goods of improper quality/completeness/assortment/packaging and shall reimburse to the Buyer all damages and expenses sustained or to be sustained in connection with such improper supply. In addition to that the Supplier shall</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
 Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>ոչ պատշաճ մատակարարման հետ կապված: Ի հավելումս դրա Մատակարարը պարտավոր է ժամանակին /Կողմերի միջև նման դեպքի համար համաձայնեցված ժամանակահատվածում/ մատակարարել պատշաճ Ապրանքներ:</p>	<p>promptly (within the time-frames agreed by the Parties for this case) supply the proper Goods.</p>
<p>10.7. Վերոնշյալ 10.6. կետով սահմանված դեպքում, Գնորդը, իր սեփական որոշմամբ և հայեցողությամբ, իրավասու է մերժել մատակարարված Ապրանքների ընդունումն ամբողջությամբ կամ մասնակիորեն: Մատակարարման նոր ժամկետը, որ կհամաձայնեցվի Կողմերի միջև չի դիտարկվի որպես Ապրանքների մատակարարման նոր ժամկետ, և Գնորդի գրավոր ծանուցման հիման վրա Մատակարարը պարտավոր կլինի վճարել սույն Պայմանների 10.2. կետով սահմանված տուգանքները:</p>	<p>10.7. In case stipulated by the clause 10.6. hereof above subject to its sole decision and discretion the Buyer shall have a right to refuse to accept the Goods supplied fully or partially. The new term of supply which will be agreed by the Parties shall not be considered as the new term of supply of the Goods, hence upon Buyer's written notice the Supplier shall be liable to pay penalties as per clauses 10.2. hereof above.</p>
<p>10.8. Տուգանքների վճարումը չի ազատում Կողմերին սույնով սահմանված պարտականությունների կատարումից:</p>	<p>10.8. Penalty payment shall not set the Parties free from the performance of the obligations hereunder.</p>
<p>10.9. Գնորդը կարող է ցանկացած ժամանակ՝ առանց Մատակարարին գրավոր ծանուցման Մատակարարի ցանկացած պարտավորություն Գնորդի հանդեպ հաշվանցել Մատակարարի հանդեպ Գնորդի ցանկացած պարտավորությամբ, անկախ այն հանգամանքից պարտավորությունն առկա է, թե կարող է առաջանալ ապագայում, լուծված, թե չմարված, անկախ նրանից, թե այս կամ այն պատասխանատվությունը առաջացել է Պայմանագրից, թե՛ ոչ: Սույն կետով սահմանված իրավունքների իրականացումը Գնորդի կողմից չի կարող ազդել կամ սահմանափակել սույն Պայմանագրով կամ այլ եղանակով սահմանված իրավունքները կամ հատուցումները:</p>	<p>10.9. The Buyer may, at any time, without notice to the Supplier, set off any liability of the Supplier to the Buyer against any liability of the Buyer to the Supplier, whether either liability is present or future, liquidated or unliquidated, and whether or not either liability arises under the Agreement. Any exercise by the Buyer of its rights under this clause shall not limit or affect any other rights or remedies available to it under this Agreement or otherwise.</p>
<p>11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ</p>	<p>11. TERMINATION OF THE AGREEMENT</p>
<p>11.1. Գնորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին 15 (տասնհինգ) օր առաջ տեղեկացնելով Մատակարարին՝ առանց հետագա ֆինանսական և այլ պարտավորության, բացառությամբ չկատարված պարտավորությունների, որոնց մասով Պայմանագիրը դադարում է դրանց ամբողջական կատարման պահից:</p>	<p>11.1. The Buyer has the right to unilaterally terminate the Agreement at any time with 15 (fifteen) days prior written notice to the Supplier without any further financial or other obligations, except for non-executed obligations, for which this Agreement shall terminate upon full execution.</p>
<p>11.2. Գնորդի կողմից սույն Պայմանների և/կամ Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Մատակարարը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից կամ համապատասխան հավելվածից՝ այդ մասին գրավոր ծանուցելով Գնորդին և նրան տրամադրելով 15 (տասնհինգ) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Գնորդը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը կամ հավելվածը լուծված է համարվում թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարանի կամ արբիտրաժի անհրաժեշտության:</p>	<p>11.2. In the event of breach of any of the conditions of this Terms and/or the Agreement by the Buyer, the Supplier may unilaterally terminate the Agreement or appropriate appendix subject to giving the Buyer a written notice and allowing it 15(fifteen) days to cure the default. The Agreement or the appropriate appendix shall terminate on expiration of the cure period if the Buyer has failed to cure the breach, with no other formalities or judicial or arbitral court intervention being required.</p>
<p>11.3. Մատակարարի կողմից սույն Պայմանների և/կամ Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Գնորդը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից կամ համապատասխան հավելվածից՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Մատակարարին և նրան տրամադրելով 15 (տասնհինգ) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Մատակարարը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում,</p>	<p>11.3. In the event of breach of any of the conditions of this Terms and/or the Agreement by the Supplier, the Buyer may unilaterally terminate the Agreement or the appropriate appendix subject to giving the Supplier a written notice and allowing it 15 (fifteen) days to cure the default. The Agreement or the appropriate Order shall terminate on expiration of the cure period if the Supplier has failed to cure the breach, with no other</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
 Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>ապա Պայմանագիրը կամ համապատասխան Պատվերը համարվում է լուծված թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումների կատարելու կամ դատարանի կամ արբիտրաժի անհրաժեշտության:</p>	<p>formalities or judicial or arbitral court intervention being required.</p>
<p>11.4. Պայմանագիրը կարող է դադարեցվել նաև վնաս չհասցրած Կողմի կողմից Պայմանագրի շրջանակում սահմանված պարտականությունների իրականացման արդյունքում մյուս Կողմի կողմից նյութական վնաս հասցնելու դեպքում, այն պարագայում, երբ հասցված վնասը չի վերականգնվել և/կամ համապատասխանաբար փոխհատուցվել վնասը հասցրած կողմի կողմից տվյալ վնասի վերաբերյալ գրավոր ծանուցումը վնաս չհասցրած Կողմի կողմից տրամադրելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում: Պայմանագրի լուծումը տվյալ պարագայում չի ազատում վնաս հասցրած Կողմին վնասը հասցնելու հետ կապված ոչ մի պատասխանատվությունից:</p>	<p>11.4. The Agreement may be terminated by the non-breaching party in the event of material breach by the other party of any obligations under the Agreement where such material breach is not cured and/or refunded within thirty (30) days after written notice of such breach has been given by the non-breaching party to the breaching party; no such termination shall relieve the defaulting party from any liability in connection with such breach;</p>
<p>11.5. Պայմանագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուր կողմից, այն պարագայում, երբ Պայմանագրի մյուս կողմը հայտարարվում է սնանկ, անվճարունակ, գնում է լուծարման, կամ որևիցե այլ եղանակով համաձայնության է գալիս իր պարտատերերի հետ (վերականգնվելու կամ վերամիավորումից տարբերվող) կամ նշանակում է պարտատիրոջ կամ ներգրավված է որևիցե նմանատիպ գործընթացում ցանկացած իրավասությունում:</p>	<p>11.5. The Agreement may be terminated also by either party in the event that the other party becomes bankrupt, insolvent, goes into liquidation, or otherwise enters into any composition or arrangement with its creditors (other than for the purpose of reconstruction or amalgamation) or has a receiver appointed or suffers any similar proceedings under any competent jurisdiction;</p>
<p>11.6. Սույն Պայմանագրով մատակարարման ուշացման համար սահմանված տույժերը 3 (երեք) անգամից ավել կիրառվելու դեպքում, Գնորդը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին նախապես ծանուցելով Մատակարարին:</p>	<p>11.6. In the event the penalties defined in this Terms for late deliveries are applied more than 3 (three) times, the Buyer may unilaterally terminate the Agreement with a prior notice to the Supplier.</p>
<p>11.7. Պայմանագրի լուծման պահից ոչ մի նոր հավելված, Պատվեր չի կարող կնքվել, իսկ դեռևս չկատարված, սակայն ուժի մեջ լինող հավելվածների, Պատվերների մասով Պայմանագիրը շարունակում է գործել՝ անկախ Պայմանագրի լուծման հանգամանքից՝ մինչև հավելվածի, Պատվերի ամբողջական կատարումը՝ սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:</p>	<p>11.7. Upon termination of the Agreement no new appendix, Order can be concluded. For the non-executed appendixes still in force, the Agreement continues to be in full force, independent of the termination of the Agreement, until full execution of the order, as set forth in the Agreement.</p>
<p>11.8. Պայմանագրի լուծման պահից Կողմերի բոլոր հետագա իրավունքներն ու պարտավորությունները դադարում են, բացառությամբ Կողմերի 1) Պայմանագրի լուծման օրվա դրությամբ կամ դրանից հետո վճարման ենթակա բոլոր պարտքերի, 2) Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորության, որն ուժի մեջ է մտնում լուծման ամսաթվից հետո կամ որը պետք է կատարվի Պայմանագրի լուծման հետ կապված կամ դրա հետևանքով կամ որի գործողությունը շարունակվում է Պայմանագրի լուծումից հետո (օր.՝ երաշխիքի և երաշխիքային սպասարկման հետ կապված պարտավորություններ և այլն):</p>	<p>11.8. Upon termination of the Agreement all further rights and obligations of the Parties shall cease, except that the Parties shall not be relieved of (i) its obligation to pay any money due, or to become due, as of or after the date of termination, (ii) any other obligation set forth in the Agreement which is to take effect after the date of termination or which shall be executed in connection or as a result of termination of the Agreement or which continues its execution after termination of the Agreement (e.g. obligations regarding warranty and warranty service, etc.).</p>
<p>11.9. Պայմանագրի լուծման պահից Մատակարարը պարտավորվում է ողջամիտ ժամկետում և պատշաճ վիճակում Գնորդին վերադարձնել վերջինիս պատկանող բոլոր Ապրանքները, տեղեկատվությունը, տվյալները, նյութերը և Ապրանքների վերաբերյալ այլ տվյալները:</p>	<p>11.9. Upon termination of the Agreement the Supplier shall handover to the Buyer all the Goods information, data, material and other relevant Goods details belonging to the Buyer in a timely and organized manner.</p>
<p>12. ՖՈՐՍ ՄԱՃՈՐ</p>	<p>12. FORCE MAJEURE</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>12.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության պատճառով, որն առաջացել է Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում. երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Միևնույն ժամանակ Կողմերն ընդունում են, որ Մատակարարը պարտավոր է հնարավորինս շուտ հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել Գնորդին հավանական ֆորս մաժորի վերաբերյալ և 24 (քսանչորս) ժամկա ընթացքում գրավոր ծանուցել Գնորդին ֆորս մաժորի վերաբերյալ տրամադրելով մանրամասն նկարագրություն ֆորս մաժորային իրավիճակի բնույթի վերաբերյալ:</p>	<p>12.1. The Parties shall be exonerated from the liability for non-execution or half execution of the obligation envisaged by the Agreement if it is the result of the force majeure influence which has arisen after signing the Agreement and which Parties could not foresee and prevent. The mentioned situations are earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations envisaged by the Agreement. At the same time the Parties agree that the Supplier is obliged as soon as reasonably possible to notify the Buyer by telephone of the occurrence of the force majeure event and give the Buyer written notice of the force majeure event within twenty-four (24) hours of the occurrence describing in reasonable detail the nature of the force majeure event.</p>
<p>12.2. Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:</p>	<p>12.2. If the force-majeure continues more than 3 (three) months each Party is entitled to terminate the Agreement with a prior notice to the other Party.</p>
<p>12.3. Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը ֆորս մաժորային իրավիճակի հետևանքները մեղմացնելու և Պայմանագրով սահմանված պարտականություններն իրականացնելու համար՝ տեղաբաշխելով իր առկա արդադրանքն այնպես, որպեսզի ապահովվի Գնորդին պատշաճ, ժամանակին և անդադար մատակարարումը:</p>	<p>12.3. The Supplier shall use all reasonable efforts to mitigate the effects of the force majeure event and shall use all reasonable endeavours to perform its obligations under the Agreement, by allocating its available production with a view to maintaining an adequate, timely and continuous supply of Products to the Buyer.</p>
<p>12.4. Այն պարագայում, եթե Մատակարարը չի կիրառում բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի նվազեցնի ֆորս մաժորային իրավիճակով պայմանավորված ազդեցությունները և չի օգտագործում բոլոր ողջամիտ հնարավորությունները սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնելու համար, ապա Մատակարարը չի ազատվում իր պարտավորությունները չկատարելու համար սահմանված պատասխանատվությունից:</p>	<p>12.4. If the Supplier has failed to use all reasonable efforts to mitigate the effects of the Force Majeure Event and did not use all reasonable endeavors to perform its obligations under this Terms and the Agreement than the Supplier is not relieved from its liability arising out of the suspended performance of its obligations.</p>
<p>13. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ</p>	<p>13. NOTICES</p>
<p>13.1. Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով, եթե Պայմանագրի որևէ այլ կետով այլ բան սահմանված չէ:</p>	<p>13.1. All notices of the Agreement shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in the Agreement, unless otherwise explicitly defined in the Agreement.</p>
<p>13.2. Կողմերից յուրաքանչյուրը, Պայմանագրով սահմանված իր տվյալների, վավերապայմանների, հասցեների փոփոխման դեպքում, պարտավոր է գրավոր ձևով տեղեկացնել մյուս Կողմին այդ փոփոխության մասին, համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պարտականությունը համապատասխան Կողմի կողմից սահմանված ժամկետում չկատարելու դեպքում մյուս Կողմի՝ Պայմանագրում նշված տվյալների օգտագործմամբ բոլոր գործողությունները համարվում են պատշաճ կատարված:</p>	<p>13.2. Each from the Parties is obliged to inform in written on changes of its data, requisites, addresses, the other Party, within 7 (seven) days following the appropriate change. In case of non-execution of the obligation mentioned in this clause by the appropriate Party, all actions of the other Party using data mentioned in the Agreement shall be deemed to be performed properly.</p>

<p>13.3. Մատակարարը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Գնորդին Մատակարարի Վերահսկողության Փոփոխության դեպքում: Պայմանագրի շրջանակներում Մատակարարի Վերահսկողության Փոփոխությունը վերաբերում է Մատակարարի ցանկացած փոփոխության, որը կապված է՝ ա) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան 50 (հիսուն) տոկոսի սեփականության իրավունքի կամ վերահսկողության (ուղղակի կամ անուղղակի) հետ, կամ բ) գլխավոր ժողովների ընթացքում օգտագործվող ձայների քանակի ավելի քան 50 (հիսուն) տոկոսի ղեկավարման ունակության (ուղղակի կամ անուղղակի) հետ, կամ գ) տնօրենների խորհրդի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ հեռացնելու իրավունքի (ուղղակի կամ անուղղակի) հետ:</p>	<p>13.3. The Supplier shall promptly inform the Buyer in case of a Change of Control of the Supplier. For the purposes of the Agreement, “Change of Control” shall mean in reference to the Supplier, any change in: (a) the ownership or control (directly or indirectly) of more than 50 % ([fifty] percent) of the voting capital; or (b) the ability (directly or indirectly) to direct the casting of more than 50 % ([fifty] percent) of the votes exercisable at general meetings; or (c) the right (directly or indirectly) to appoint or remove the majority of the members of the board of directors.</p>
<p>14. ԶԲԱՑԱՐԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</p>	<p>14. CONFIDENTIAL INFORMATION</p>
<p>14.1. Պայմանագրով Գնորդի կողմից բացահայտված Գնորդի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև նոր լուծումների և տեխնիկական գիտելիքների մասին՝ ներառյալ օրենքով չպաշտպանվող տեղեկատվություն, այսուհետ՝ Զբացահայտված Տեղեկատվություն, հանդիսանում է Գնորդի սեփականությունը և Պայմանագրով այդ տեղեկատվության նկատմամբ որևիցե իրավունք և/կամ լիցենզիա ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի փոխանցվում Մատակարարին, նրա աշխատողներին, տնօրեններին, ենթամատակարարներին, մասնաճյուղերին, կախյալ կամ դուստր ընկերություններին:</p>	<p>14.1. Under the Agreement the information related to the activity of the Buyer disclosed by the Buyer as well as solutions and technical knowledge, including information non-defended by law, hereinafter Confidential Information is considered to be the property of the Buyer and under this Agreement disclosure of Confidential Information does not confer any rights and/or license in the Confidential Information either directly or indirectly to the Supplier, its employees, directors, sub-suppliers, branches, dependant or daughter companies.</p>
<p>14.2. Մատակարարը պարտավորվում է չընդօրինակել և (կամ) չպատճենահանել և (կամ) չօգտագործել իրեն տրամադրված Զբացահայտված Տեղեկատվությունը, բացառությամբ Պայմաններով և/կամ Պայմանագրով նախատեսված նպատակների համար:</p>	<p>14.2. The Supplier undertakes not to imitate and (or) copy and (or) use the disclosed Confidential Information, except for the purposes envisaged hereby this Terms and/ or the Agreement.</p>
<p>14.3. Մատակարարը պարտավորվում է գաղտնի պահել տրամադրված Զբացահայտված Տեղեկատվությունը և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր ողջամիտ քայլերը պահպանելու համար այն, այդ թվում՝ բոլոր այն քայլերը, որոնք նա ձեռնարկում է պահպանելու համար սեփական նմանատիպ Զբացահայտված Տեղեկատվությունը:</p>	<p>14.3. The Supplier undertakes to keep the provided Confidential Information in secret and take all necessary actions to protect it, including all those actions that they take to protect their own similar Confidential Information.</p>
<p>14.4. Մատակարարը պատասխանատվություն է կրում իր աշխատողների և տնօրենների, մասնաճյուղերի, կախյալ կամ դուստր ընկերությունների, իր պրոֆեսիոնալ խորհրդատուների, գործակալների համար, որոնք «անհրաժեշտ է, որ տիրապետեն տվյալ տեղեկությանը» Պայմանագրով նախատեսված նպատակների իրականացման համար, որոնց բացահայտվել է Գնորդի գաղտնի տեղեկատվությունը:</p>	<p>14.4. The Supplier is responsible for its employees, directors, branches, dependant and daughter companies, professional advisers, agents who have a "need to know" for fulfilment of the purposes defined herein, to who confidential information of the Buyer was disclosed.</p>

<p>14.5. Եթե Մատակարարը պարտավոր է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին կամ իր կանոնադրությամբ սահմանված մարմիններին նրանց պահանջով տրամադրել Չբացահայտված Տեղեկատվությունը, ապա նա պարտավոր է մինչ նման տեղեկությունների տրամադրումը դրա մասին տեղյակ պահել Գնորդին և վերջինիս պահանջով ու հաշվին ողջամիտ ջանքեր գործադրել՝ սահմանափակելու Չբացահայտված Տեղեկատվության տրամադրումը:</p>	<p>14.5. If the Supplier is required to disclose the Confidential Information to state bodies or local self-governmental bodies, courts or to its statutory authorities by their demand, the Supplier shall notify the Buyer before complying with any such requirement, and at the request and expense of the latter, use reasonable efforts to limit such disclosure.</p>
<p>14.6. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Մատակարարը չի կարող գովազդել կամ հրապարակել այն փաստը, որ Մատակարարը պայմանագիր է կնքել Գնորդի հետ կամ այլ կերպ հարաբերություններ է հաստատել Գնորդի հետ:</p>	<p>14.6. Unless otherwise authorized by the Agreement, Supplier shall not advertise or publish the fact that Supplier has contracted with Buyer or otherwise established a relationship with Buyer.</p>
<p>14.7. Պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ Գնորդի պահանջով, Մատակարարը պարտավոր է կյուբական կրիչի վրա Գնորդին վերադարձնել իր տիրապետության տակ գտնվող ամբողջ Չբացահայտված Տեղեկատվությունը և դրանց պատճենները և (կամ) Գնորդի պահանջով ջնջել նշված Չբացահայտված Տեղեկատվությունը բոլոր համակարգչային ֆայլերից և ինֆորմացիոն կրիչ սարքերից:</p>	<p>14.7. Upon expiration of the Agreement or at the request of the Buyer, the Supplier shall return to the Buyer all the Confidential Information and their copies in its possession in a tangible form and at the request of the Buyer shall delete the Confidential Information from all computer files and information media.</p>
<p>14.8. Սույն Պայմաններով սահմանված Չբացահայտված Տեղեկատվության վերաբերյալ պարտականությունները պետք է գործեն նաև Պայմանագրի գործողության դադարեցման և լուծման դեպքում՝ կիրառվող օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետով, կամ եթե նման ժամկետն անիրագործելի է, ապա նվազագույնը 5 (հինգ) տարի ժամկետով, սկսած Պայմանագրի դադարեցման պահից, սակայն առանց մինչ այդ պահը Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելու համար սահմանված պատասխանատվության վրա ազդեցություն ունենալու:</p>	<p>14.8. The obligations under this Terms in relation to Confidential Information shall also last indefinitely in the event of expiration or termination of the Agreement to the maximum extent permitted by applicable law or, in case this term is unenforceable, at least for a period of five (5) years from termination of the Agreement, but without affecting the liability of the Supplier for breach of the Agreement before then.</p>
<p align="center">15. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p align="center">15. PRIVACY AND DATA PROTECTION</p>
<p>15.1. Սույնով Մատակարարը համաձայնում է երաշխավորել, որ իր աշխատողները, գործակալները և ենթամատակարարները մշտապես համապատասխանեն Եվրոպական միության ընդհանուր տվյալների պաշտպանության 2016/679 կանոնակարգին (GDPR) և այլ կիրառելի օրենքներին և կարգավորումներին, որոնք վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանը՝ կապված սույն Պայմաններով և Պայմանագրով Գնորդից ստացված անձնական տվյալների պաշտպանությանը, և Մատակարարն իրավասու է ստացված անձնական տվյալները մշակել միայն Գնորդի ցուցումների համաձայն:</p>	<p>15.1. Supplier agrees that it shall procure that its employees, agents and sub-suppliers shall, at all times, comply with the European Union Data Protection Regulation 2016/679 (GDPR) and other applicable laws and regulations regarding personal data protection, in relation to personal data received from the Buyer under these Terms and the Agreement and that it shall only process personal data so received in accordance with the instructions of the Buyer.</p>

<p>15.2. Մատակարարը պարտավոր է փոխհատուցել Գնորդին բոլոր ծախսերը, դատական ծախսերը, հայցերը, վնասները, պահանջները և բոլոր այլ ծախսերը, որոնք առաջանում են սույն Պայմանների 15.1. կետի ցանկացած խախտման հետ կապված: Մատակարարը չպետք է անձնական տվյալները փոխանցի երրորդ անձնաց՝ առանց Գնորդի նախնական գրավոր համաձայնության:</p>	<p>15.2. Supplier shall indemnify the Buyer against all costs, legal costs, claims, damages, demands and all other expenses arising out of any breach of 15.1. clause. Supplier shall not transfer personal data to the third parties without the prior written consent of the Buyer.</p>
<p align="center">16. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p align="center">16. INTELLECTUAL PROPERTY</p>
<p>16.1. Սույն Պայմաններում և Պայմանագրում «Մտավոր սեփականության իրավունքները» նշանակում են արտոնագրեր, օգտակար մոդելներ, գյուտի իրավունքներ, հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ և վերաբերելի իրավունքներ, ապրանքային և սպասարկման նշաններ, ֆիրմային անվանումներ և դոմենային անուններ, արտաքին տեսքի և ֆիրմային ոճի իրավունքներ, բարի կամքի կամ անբարեխիղճ մրցակցության կանխման իրավունքը, նմուշների, տվյալների բազայի նկատմամբ իրավունքներ, չբացահայտված տեղեկատվության օգտագործման և պաշտպանության (ներառյալ նոու-հաու և առևտրային գաղտնիք), ինչպես նաև մտավոր սեփականության այլ իրավունքներ, յուրաքանչյուր դեպքում, լինի դա գրանցված կամ չգրանցված, ներառյալ բոլոր հայտերը և դիմելու իրավունքները և դրանց տրամադրումը, նորացումը կամ երկարաձգումը, ինչպես նաև նման իրավունքներից և բոլոր նմանատիպ կամ համարժեք իրավունքներից կամ պաշտպանության ձևերից նախապատվություն ստանալու իրավունքը, որոնք գոյություն ունեն կամ գոյություն կունենան այժմ կամ ապագայում աշխարհի ցանկացած մասում:</p>	<p>16.1. In this Terms and the Agreement “Intellectual Property Rights” mean patents, utility models, rights to inventions, copyright and neighbouring and related rights, trademarks and service marks, business names and domain names, rights in get-up and trade dress, goodwill and the right to sue for passing off or unfair competition, rights in designs, database rights, rights to use, and protect the confidentiality of confidential information (including know-how and trade secrets), and all other intellectual property rights, in each case whether registered or unregistered and including all applications and rights to apply for and be granted, renewals or extensions of and rights to claim priority from such rights and all similar or equivalent rights or forms of protection which subsist or will subsist now or in the future in any part of the world.</p>
<p>16.2. Գնորդը պահպանում է մատակարարման հետ կապված Գնորդի կողմից Մատակարարին տրամադրված կամ մշակված ցանկացած փաստաթղթերում, տվյալներում կամ նյութերում ներառված մտավոր սեփականության բոլոր իրավունքը: Սույնով Գնորդը Մատակարարին տրամադրում է այդպիսի Մտավոր սեփականության օգտագործման ոչ բացառիկ, անհատույց, չփոխանցվող լիցենզիա այնպիսի տևողությամբ, որը պատշաճ և ողջամտորեն անհրաժեշտ է մատակարարման իրականացման համար:</p>	<p>16.2. Buyer shall retain all Intellectual Property vesting in any documentation, data or materials developed or provided by Buyer to Supplier in connection with the supply. Buyer hereby grants the Supplier a non-exclusive, royalty-free, non-transferable license to use such Intellectual Property for, and for such duration, as is properly and reasonably required in order to execute the supply.</p>

<p>16.3. Մատակարարը հայտարարում և երաշխավորում է, որ Ապրանքի դիզայնը, արտադրությունը և գործառնությունը, ինչպես նաև դրա տրամադրումը, օգտագործումը կամ վաճառքը ոչ մի կերպ չեն խախտի որևէ արտոնագրային, ապրանքանիշի, առևտրային գաղտնիքի, դիզայնի, հեղինակային իրավունք կամ որևէ երրորդ կողմի այլ իրավունքներ:</p> <p>Մատակարարը պարտավորվում է Գնորդին փոխհատուցել Գնորդի դեմ ներկայացված ցանկացած հայցի կապակցությամբ Գնորդի կրած կամ ստանձնած բոլոր պարտավորությունները, ծախսերը, վնասները և կորուստները (ներառյալ, բայց չսահմանափակվելով, ցանկացած ուղղակի, անուղղակի կամ հետևանքային վնասները, բաց թողնված օգուտները, հեղինակության կորուստը և բոլոր տոկոսները, տուգանքները և դատական ծախսերը (հաշվարկված լրիվ փոխհատուցման հիման վրա), ինչպես նաև բոլոր այլ ողջամիտ մասնագիտական ծախսերը՝ կապված Գնորդի և նրա լիցենզավորված անձանց և ենթալիցենզառուների կողմից մատակարարման ստացման, օգտագործման կամ հետագա կատարման հետ կապված երրորդ անձանց իրավունքների փաստացի կամ ենթադրյալ խախտման հետ (ներառյալ ցանկացած մտավոր սեփականության իրավունք):</p>	<p>16.3. The Supplier represents and warrants that the design, manufacture and function of the Goods nor its provision, use or sale will in any way infringe upon or violate any patent, trade mark, trade secret, design right, copyright or other rights of any third party. The Supplier shall indemnify Buyer against all liabilities, costs, expenses, damages and losses (including but not limited to any direct, indirect or consequential losses, loss of profit, loss of reputation and all interest, penalties and legal costs (calculated on a full indemnity basis) and all other [reasonable] professional costs and expenses) suffered or incurred by Buyer arising out of or in connection with any claim brought against Buyer for actual or alleged infringement of a third party's rights (including any Intellectual Property Rights) arising out of, or in connection with, the receipt, use or onward execute of the supply by Buyer and its licensees and sub-licensees. This Clause 16.3. (Intellectual Property) shall survive termination of this Agreement.</p>
<p align="center">17. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p>	<p align="center">17. CONCLUSIVE PROVISIONS</p>
<p>17.1. Կողմերն ընդունում են, որ Մատակարարը ծանոթացել է Գնորդի Գործարար Վարքագծի Կոդեքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին, ամբողջությամբ ընդունում է դրանք և պարտավորվում է գործել դրանց համապատասխան: Գործարար Վարքագծի Կոդեքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին հղումը՝ https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0</p>	<p>17.1. The Parties agree that the Supplier shall be acknowledged with the Code of Business Conduct, Anti-Bribery policy and Supplier Guiding Principles of the Buyer, fully accepts them and undertakes to act in compliance with them. Reference to the Code of Business Conduct, Anti-Bribery policy and Supplier Guiding Principles: https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0</p>
<p>17.2. Մատակարարը երաշխավորում է, որ առկա են համապատասխան ընթացակարգեր, որոնք ուղղված են Մատակարարի համար աշխատող կամ նրա կողմից ներգրավված որևէ անձի կամ որևէ այլ երրորդ կողմի՝ սույն Պայմանների և Պայմանագրի հետ կապված որևէ գործունեության մասնակցության կանխարգելմանը, փորձը կամ վարքագիծը, որը կարող է խախտել Գնորդի քաղաքականությունները կամ կաշառակերության կամ կոռուպցիայի դեմ որևէ օրենք, կարգավորումներ և օրենսգրքեր՝ Կիրառելի օրենսդրության համաձայն,</p>	<p>17.2. The Supplier ensures that has in place adequate procedures designed to prevent any person working for or engaged by the Supplier or any other third party in any way connected to this Terms and the Agreement, from engaging in any activity, practice or conduct which would infringe the Buyer's policies or any anti-bribery and anti-corruption laws, regulations and codes under Applicable Laws;</p>
<p>17.3. Մատակարարը պարտավոր է ցուցադրել Գնորդի քաղաքականություններին համապատասխանությունը Գնորդի պահանջի և հավանության առկայության դեպքում,</p>	<p>17.3. The Supplier must be able to demonstrate compliance with the Buyer's policies at the request and satisfaction of the Buyer;</p>
<p>17.4. Սույն Պայմանների 17.1.- 17.3 կետերից որևիցե մեկի խախտումը իրավունք է վերապահում Գնորդին անմիջապես, գրավոր ծանուցմամբ, լուծել Պայմանագիրը:</p>	<p>17.4. Breach of one of the clauses from 17.1.- 17.3. of this Terms shall entitle the Buyer to terminate the Agreement by written notice with immediate effect.</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>17.5. Մատակարարը պարտավոր է ապահովել մատակարարման վերաբերյալ արձանագրությունների պատշաճ պահպանումը նվազագույնը 5 (հինգ) տարի ժամկետով: Մատակարարը պարտավոր է հասանելի դարձնել նշված արձանագրությունները Գնորդի, վերջինիս ներկայացուցիչների և մասնագիտացված խորհրդատուների համար նշված ժամանակահատվածի ընթացքում ցանկացած պահի՝ ըստ պահանջի: Գնորդն իրավասու է անհրաժեշտության դեպքում վերցնել նշված արձանագրությունների օրինակը կամ ոչնչացնել նշված օրինակները:</p>	<p>17.5. The Supplier is obliged to ensure that proper records are kept relating to the performance of the supply minimum for the period of 5 (five) years. The Supplier shall make such documentation available for examination by the Buyer and its representatives and professional advisers at any time during such period on request. The Buyer preserves the right to take copies of any records which it reasonably requires or remove such copies.</p>
<p>17.6. Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ ելնելով Պատվերի հիման վրա մատակարարվող Ապրանքի առանձնահատկություններից, սույն Պայմաններով սահմանված Փաստաթղթերի, Երաշխիքի և Ապրանքի մասերի վերաբերյալ դրույթները կարող են կիրառելի չլինել՝ դրա վերաբերյալ համապատասխան Պատվերում Կողմերի կողմից ամրագրված հատուկ նշումին և տվյալներին համապատասխան:</p>	<p>17.6. The Parties mutually accept, that based on the specificities of the Goods being supplied under respective Order, the provisions of this Terms related to the Documentation, Warranty and parts of the Goods may be not applicable, if there is specific mentioning and data on it recorded by the Parties in the respective Order.</p>
<p>17.7. Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ սույն Պայմանները և Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային իրավունքի համապատասխան դրույթներով:</p>	<p>17.7. The Parties mutually accept, that this Terms and the Agreement is regulated by the provisions of the legislation of the Republic of Armenia and relevant provisions of the international law.</p>
<p>17.8. Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ սույն Պայմանների և Պայմանագրի հետ կապված բոլոր վեճերը լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով: Կողմերի կողմից համաձայնության գալու անհնարինության դեպքում սույն Պայմանների և Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դրանց հետ կապված իրավասու են ճանաչվում Հայաստանի Հանրապետության դատական մարմինները, եթե Կողմերի միջև այլ բան գրավոր կերպով չի փոխհամաձայնեցվել:</p>	<p>17.8. The Parties mutually agree that all disputes arising from this Terms and the Agreement shall be settled via mutual negotiations. In case of impossibility of alignment by the Parties the disputes related to this Terms and the Agreement shall be solved as set forth by the legislation of the Republic of Armenia and court bodies of the Republic of Armenia shall be deemed authorized for such cases, if otherwise is not agreed between the Parties in written.</p>
<p>17.9. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի հիման վրա նոր հավելվածներ, Պատվերներ չեն կարող փոխհամաձայնեցվել և կնքվել:</p>	<p>17.9. The Parties agree that after the expiry of validity period of the Agreement there cannot be mutually agreed and concluded new appendixes, Orders based on the Agreement.</p>
<p>17.10. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:</p>	<p>17.10. The amendments and additions to the Agreement shall be discussed by the Parties mutually and defined in a separate agreement, except for the cases defined in the Agreement or in legislation.</p>
<p>17.11. Պայմանագրի բոլոր փոփոխությունները, հավելվածները, Պայմանագրի հիման վրա կնքված բոլոր համաձայնագրերը, փաստաթղթերը, Պատվերները կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:</p>	<p>17.11. All changes, appendixes to the Agreement, agreements, documents, Orders concluded based on the Agreement shall constitute an integral part thereof.</p>
<p>17.12. Պայմանագրի և/կամ սույն Պայմանների որևէ դրույթի/կետի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների/կետերի անվավերության:</p>	<p>17.12. If any provision/term of this Terms and/or the Agreement is held invalid, such invalidity shall not affect any other provision/term hereof.</p>
<p>17.13. Սույն Պայմանների փոփոխման կարգը սահմանված է Կողմերի միջև կնքված Պայմանագրով:</p>	<p>17.13. The procedure for amending these Terms is defined by the Agreement concluded between the Parties.</p>



Coca-Cola

Hellenic Bottling Company

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

GENERAL TERMS OF THE INTERNATIONAL SUPPLY AGREEMENT

Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 1	ATTACHMENT № 1
Միջազգային մատակարարման պայմանագրի ընդհանուր պայմանների (Պայմաններ)	To the general terms of the international supply agreement (the Terms)
<p>Գնորդն և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ կնքում են Պայմանների սույն Կից փաստաթուղթը, որով հաստատում են որակի, սննդի անվտանգության, առողջության և անվտանգության և բնապահպանական դրույթները Մատակարարների համար, որոնք ապրանքներ են մատակարարում «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՅԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ԶԸՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին, ինչպես նաև այդ դրույթների խախտման ցանկը.</p>	<p>The Buyer and the Supplier by mutual agreement conclude this attachment to the Terms, hereby confirming Quality & Food Safety, Health & Safety and Environmental clauses for Suppliers supplying Goods to “COCA-COLA HELLENIC BOTLING BUYER ARMENIA” CJSC, as well as the list of violations of those rules:</p>
1. ՆՊԱՏԱԿ	1. PURPOSE
<p>1.1. Սույն կից փաստաթուղթը սահմանում է որակի և սննդի անվտանգության, առողջության և անվտանգության և բնապահպանական պահանջները (այսուհետ՝ պահանջներ), որոնք պետք է պահպանվեն «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՅԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ԶԸՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Գնորդ) ապրանքներ մատակարարող Մատակարարների կողմից՝ հիմնվելով հետևյալ աղբյուրների վրա.</p> <ul style="list-style-type: none"> • Գնորդի պահանջներ • Կոկա-Կոլա ընկերության պահանջներ («ԿԿԸ») (=KORE) • Տեղական օրենքներ և կանոնակարգեր, որոնք կիրառելի են ապրանքների մատակարարման համար: <p>1.2. Սույն կից փաստաթղթի նպատակների շրջանակներում Մատակարարի ցանկացած պարտավորություն (այսուհետ՝ Մատակարարի Պարտավորություն) ներառում է Մատակարարի պարտականությունն ապահովել վերջինիս կատարումը Մատակարարի յուրաքանչյուր ենթամատակարարի կողմից, որը կարող է օգտագործվել Գնորդին ապրանքների մատակարարման հարաբերություններում:</p>	<p>1.1. This attachment defines Quality & Food Safety, Health & Safety and Environmental requirements (the “requirements”) that must be adhered to by Suppliers supplying goods to “COCA-COLA HELLENIC BOTLING COMPANY ARMENIA” CJSC (“Buyer”) and are based on the following sources:</p> <ul style="list-style-type: none"> • The Buyer requirements • The requirements of The Coca-Cola Company (“TCCC”) (=KORE) • Local laws and regulations applicable to the supply of goods <p>1.2. For the purposes of this attachment, any obligation on the Supplier (a “Supplier’s Obligation”) shall include an obligation on the Supplier to procure performance of the Supplier’s Obligation by any of Supplier’s sub-suppliers which may be used in relation to the supply of goods to the Buyer.</p>
2. ՇՐՋԱՆԱԿ	2. SCOPE
<p>2.1. Նախապես հայտարարված և սույնով սահմանված Պահանջները վերաբերում են.</p> <ul style="list-style-type: none"> • Ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ հումքի, առաջնային և երկրորդային փաթեթավորման, սարքավորումների և օժանդակ նյութերի (օրինակ՝ քիմիական նյութեր) բոլոր Մատակարարներին: <p>Բացի այդ՝</p> <ul style="list-style-type: none"> • Մատակարարը պետք է համապատասխանի Գնորդի Մատակարարի ուղեցույց սկզբունքներին, Գնորդի Մարդու իրավունքների քաղաքականությանը և Գնորդի այլ քաղաքականություններին և/կամ 	<p>2.1. The requirements, communicated in advance and set out herein apply to:</p> <ul style="list-style-type: none"> • All Suppliers of, but not limited to, raw materials, primary & secondary packaging, equipment and auxiliary materials (e.g. chemicals). <p>Additionally:</p> <ul style="list-style-type: none"> • Supplier must comply with the Buyer Supplier Guiding Principles, Buyer Human Rights Policy and other Buyer policies and/or requirements applicable to the Supplier not mentioned in this attachment and communicated to the Supplier.

<p>պահանջներին, որոնք կիրառելի են Մատակարարի համար, նշված չեն սույն կից փաստաթղթում և հաղորդվել են Մատակարարին:</p> <p>Մատակարարից պահանջվում է ներկայացնել բոլոր համապատասխան փաստաթղթերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ համապատասխանության և (կամ) վերլուծության վկայականները՝ համապատասխան մատակարարման պայմանագրի և սույն կից փաստաթղթի պայմանների համաձայն, ինչպես նաև անվտանգության տվյալների թերթիկները, երբ դրանք կիրառելի են համապատասխան օրենքով և պահանջվել են Գնորդի կողմից:</p>	<p>The Supplier is required to submit all relevant documentation including, but not limited to, certificates of conformity and/or certificates of analysis, in line with the terms of the relevant supply contract and this attachment, as well as safety data sheets where applicable under relevant law and requested by Buyer.</p>
<p>3. ՈՐԱԿԻ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԵՎ ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ (ՈԱԲ) ՊԱՅՄԱՆՋՆԵՐ</p>	<p>3. QUALITY, SAFETY AND ENVIRONMENTAL (QSE) REQUIREMENTS</p>
<p>3.1 ՈԱԲ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՂՍԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p>3.1 QSE LEGAL COMPLIANCE</p>
<p>3.1.1. Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով պահպանել բոլոր կիրառելի օրենքները, կանոններն ու կանոնակարգերը: Այս պահանջների ցանկացած խախտում կարող է հանգեցնել տարածքից անհապաղ հեռացման, ի լրացումն և չհակասելով բոլոր այլ իրավական և պայմանագրային իրավունքներին, որոնք կարող է ունենալ Գնորդն:</p>	<p>3.1.1. The Supplier shall, at its sole cost and expense, comply with all applicable laws, rules and regulations. Any breach of these requirements may result in immediate exclusion from site, in addition to and without prejudice to all other legal and contractual rights Buyer may have.</p>
<p>3.1.2. Մատակարարը պետք է համապատասխանի.</p> <p>ա) բեռնման կանոններին և կանոնակարգերին, բեռնափոխադրումների քաշի սահմանափակումներին և կշռման համար հսկիչ-անցագրային կետերում կանգ առնելու կանոններին,</p> <p>բ) տրանսպորտային փաստաթղթեր տրամադրելուն,</p> <p>գ) բեռների պահեստավորմանը և անվտանգությանը,</p> <p>դ) վարելու և հանգստի ժամերին, վարորդի գրանցամատյաններին և արագաչափերին,</p> <p>ե) երթևեկության կանոններին,</p> <p>զ) անվտանգության արձանագրություններին և հատուկ հրահանգներին՝ բեռնման և բեռնաթափման վայրերում:</p>	<p>3.1.2. The Supplier shall comply with:</p> <p>a) loading rules & regulations, limitations on the weight of freight and stopping at scale checkpoints for weighing;</p> <p>b) issuance of transport documents;</p> <p>c) stowage and safety of consignments;</p> <p>d) driving and resting times, driver's log and tachographs;</p> <p>e) traffic regulations;</p> <p>f) safety protocols and special instructions at loading and unloading sites.</p>
<p>3.2 ՈԱԲ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ</p>	<p>3.2 QSE MANAGEMENT SYSTEM</p>
<p>3.2.1. Առավել նախընտրելի է, որ Մատակարարը վավերացված լինի կամ առնվազն ունենա ISO 9001/14001/, ISO 22001/FSSC 22000/OHSAS18001 կամ ISO45001 համարժեք կառավարման համակարգ:</p>	<p>3.2.1. It is highly recommended that the Supplier be certified or at least have a management system equivalent to ISO 9001/14001/ ISO 22001/FSSC 22000/OHSAS18001 or ISO45001.</p>
<p>3.3 ՈԱԲ ՄԵԹՈԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</p>	<p>3.3 QSE METHOD STATEMENT/RISK ASSESSMENT</p>
<p>3.3.1. Մատակարարը պետք է իրականացնի առողջության անվտանգության և բնապահպանական ռիսկերի գնահատումը բեռնման և բեռնաթափման</p>	<p>3.3.1. The Supplier must provide a health safety and environment risk assessment for the loading and unloading process, if applicable and according to local</p>

<p>գործընթացների համար, եթե այն կիրառելի է և համապատասխանում է տեղական իրավական պահանջներին, օրինակ՝ շաքարի, քիմիական նյութերի, գազի, պոլիէթիլենային տեֆալատեզինի և այլնի պահանջներին:</p> <p>3.3.2. Մատակարարին առաջարկվում է օգտագործել ռիսկերի գնահատման գործընթաց՝ որակի հսկման կետերը և սննդի անվտանգության ռիսկերը որոշելու համար (ՎԿՅԿԿ-ի յոթ սկզբունքների, տասներկու քայլից բաղկացած մոդելի հիման վրա, որը նկարագրված է ՎԱՅ/ԿՅԿ 1-1969թ. Կողեքս Ալիմենտարիոսի Սննդի հիգիենայի ընդհանուր սկզբունքներում), ինչը թույլ է տալիս հայտնաբերված ցանկացած ռիսկ հասցնել ընդունելի մակարդակի կամ վերացնել: Գործընթացը պետք է ներառի լավ գյուղատնտեսական պրակտիկան կամ լավ արտադրական պրակտիկան (եթե կիրառելի է) և աջակցի սննդի անվտանգության համակարգին:</p>	<p>legal requirements for e.g. sugar, chemical, gas, PET resin, etc.</p> <p>3.3.2. The Supplier is asked to use a risk assessment process to determine quality control points and food safety risks (based on the HACCP seven-principle, twelve-step model described in the Annex to Codex Alimentarius General Principles of Food Hygiene CAC/RCP 1- 1969), which allows any identified risks to be reduced to an acceptable level or eliminated. The process must cover Good Agricultural Practices or Good Manufacturing Practices (as applicable) and support the food safety system.</p>
<p>3.4 ՈԱԲ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</p> <ul style="list-style-type: none"> • Գնորդի նպատակն է համակարգված մոտեցում ապահովել որակի և սննդի անվտանգության, առողջության և անվտանգության և բնապահպանության հետ կապված ցանկացած միջադեպի կանխարգելման գործում, • Մատակարարից պահանջվում է զեկուցել Գնորդի հետ կապված ՈԱԲ-ի միջադեպերի մասին՝ միջադեպից անմիջապես հետո, ինչպես նաև ներկայացնել հիմնական պատճառը և համապատասխան ուղղիչ գործողությունները՝ կրկնությունը կանխելու համար, • Մատակարարը պետք է նաև Գնորդի իր կոնտակտային անձին անհապաղ տեղեկացնի միջադեպի մասին, որը կարող է հանգեցնել որակին, սննդամթերքի անվտանգությանը, առողջությանը և անվտանգությանը, բնապահպանությանը և ապրանքին/սարքավորումներին վնաս պատճառելուն: 	<p>3.4 QSE INCIDENT MANAGEMENT</p> <ul style="list-style-type: none"> • The aim of Buyer is to ensure a systematic approach for prevention of any quality & food safety, health & safety and environmental related incidents; • The Supplier is instructed to report QSE incidents related to Buyer immediately after the incident and complete root cause and appropriate corrective actions to prevent recurrence; • The Supplier must also notify their Buyer contact immediately in the event of a near miss incident which could have resulted in any Quality, Food safety, Health and Safety, Environment and goods/equipment damages.
<p>3.5 ՈԱԲ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՍՄԻՐՈՒՄ, ՀՐԱՀԱՆՁՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ</p> <p>3.5.1. Մատակարարը պետք է ապահովի, որ աշխատողները, ներառյալ մշտական, պայմանագրային և ժամանակավոր աշխատողները, որոնք աշխատում են Մատակարարի համար կամ նրա անունից, որակավորված և իրավասու լինեն՝ հիմնվելով համապատասխան կրթության, վերապատրաստման, պահանջվող լիցենզիաների, հմտությունների և փորձի վրա, որպեսզի բոլոր աշխատանքները ձեռնարկվեն՝ կանխելու ճանապարհատրանսպորտային պատահարը/վնասվածքը/սննդի անվտանգության միջադեպը/վնաս պատճառելը Գնորդի ապրանքներին և սարքավորումներին:</p>	<p>3.5 PROVISION OF QSE INFORMATION, INSTRUCTION AND TRAINING</p> <p>3.5.1. The Supplier must ensure that employees, including permanent, contract and temporary employees, working for or on behalf of the Supplier are qualified and competent based on appropriate education, training, licenses required, skills and experience so that all work can be undertaken to prevent road accident / injury / food safety incident /damage to Buyer goods and equipment.</p>
<p>3.6 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</p>	<p>3.6 EQUIPMENT</p>

Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
 Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<p>3.6.1. Մատակարարը պետք է ապահովի, որ ցանկացած սարքավորում, որն օգտագործվում է (իր կամ իր ենթամատակարարների կողմից) Գնորդի տարածքում փոխադրման և/կամ բեռնման/բեռնաթափման համար, շահագործվի և սպասարկվի որակի, մնդամթերքի անվտանգության, առողջության և անվտանգության և բնապահպանական պահանջներին, ինչպես նաև սույն կից փաստաթղթում նշված Գնորդի պահանջներին համապատասխան՝ ըստ կիրառելիության:</p>	<p>3.6.1. The Supplier must ensure that any equipment used (by itself or by its sub-suppliers) on a Buyer site for transportation and/or loading/ unloading is operated and maintained in accordance with Quality, Food safety, H&S and environmental laws and Buyer requirements set out in this attachment, where applicable.</p>
<p>3.7 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՐՏՈՆՎԱԾ ՍՈՒՏՔԻՑ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ</p>	<p>3.7 PROTECTION AGAINST UNAUTHORIZED ENTRY AND SECURITY</p>
<p>3.7.1. Գնորդին պատկանող ապրանքները, տվյալները և ենթակառուցվածքները պետք է պաշտպանված լինեն երրորդ կողմերի կանխամտածված վնասակար ազդեցությունից, ինչպիսիք են, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ քիմիական և հրդեհային ռիսկերը, ինչպես նաև բնական աղետները, որոնք առաջանում են համապատասխան շինարարության, տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներից:</p>	<p>3.7.1. Goods, data and infrastructure, which belongs to Buyer, has to be protected from wilful malicious third-party influence such as but not limited to chemical and fire risks as well as natural phenomenon by adequate construction, technical and organisational measures.</p>
<p>3.7.2. Փոխադրման ընթացքում ապրանքները պետք է ապահովված լինեն համարակալված կապարակնիքով կամ կողպեքով: Հսկողությունից դուրս կանգառների տևողությունը պետք է համաձայնեցվի երկու կողմերի միջև, երբ դա կիրառելի է: Երբ հայտնաբերվում է անվտանգության խախտում, բեռնատարն իրավասու չէ շարունակել երթևեկությունը դեպի նպատակակետը, բայց ստուգման և հետաքննության անկացման համար նա պարտավոր է վերադառնալ մեկնման կետ: Պարտադիր է անհապաղ տեղեկացնել Գնորդին: Անվտանգության խախտման դեպքում Գնորդն կհամագործակցի պայմանագրի կողմի հետ և մինևսույն ժամանակ անհրաժեշտ է ապահովել Գնորդի հասանելիությունը լոգիստիկ հաշվառման տվյալներին, եթե այդպիսիք առկա են՝ հասկանալու համար, թե որտեղ են կանգ առել բեռնատարները: Երբ վարորդը կանգ է առնում (վառելիքի լիցքավորման/հանգստի և այլն), նախքան շարժման շարունակելը պետք է ստուգել կապարակնիքները: Եթե կապարակնիքը կտրված է, պետք է անհապաղ քայլեր ձեռնարկել և զանգահարել ոստիկանություն:</p>	<p>3.7.2. During transport, the goods must be secured with a numbered seal or lock. Duration of unattended stops needs to be agreed between both parties when applicable. When a security breach is identified, the truck is not authorized to continue to its destination, but it is to return to point of origin for inspection and investigation. Buyer has to be immediately notified. In case of security breach Buyer will collaborate with the contractor and is required access to the logistics tracking data if available to understand where trucks are stopping. When a driver stops (fuel/rest etc) it is mandatory to inspect the seals before continuing. If a seal is broken Police are to be called and action taken immediately.</p>
<p>3.8 ԱՈՐԴԻՏՆԵՐ</p>	<p>3.8 AUDITS</p>
<p>3.8.1. Մատակարարը ներգրավվում է ՈԱԲ Գնորդի և KORE-ի պահանջների հետ կապված աուդիտի անցկացմանը՝ համապատասխան մատակարարման պայմանագրի պայմաններին համաձայն:</p>	<p>3.8.1. The Supplier is subject to audits related to QSE Buyer and KORE requirements, in line with the terms of the relevant supply contract.</p>
<p>4. ՈՐԱԿԻ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՁՆԵՐ</p>	<p>4. QUALITY AND FOOD SAFETY REQUIREMENTS</p>
<p>Մատակարարը պետք է համապատասխանի որակի և մնդի անվտանգության հետևյալ պահանջներին, որոնք լրացնում են համապատասխան</p>	<p>The Supplier shall comply with the following quality and food safety requirements, which supplement the relevant terms of the respective supply contract:</p>

<p>մատակարարման պայմանագրի նմանօրինակ պայմանները.</p>	
<p>4.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՐԱՅԱՆՁՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> • Պետք է պահպանվեն տեղական օրենքները և պահանջները բոլոր կիրառելի իրավասություններում (ներառյալ, բայց չսահմանափակվելով արտադրության և առաքման երկրներով): • Ապրանքի որակը և ընդհանուր անվտանգությունը պետք է համապատասխանեն համաձայնեցված բնութագրերին: • Ապրանքների գտնվելու վայրին հետևելու հնարավորությունը պետք է երաշխավորված լինի բոլոր ժամանակներում (տե՛ս Գտնվելու վայրին հետևելու հնարավորությունը): • Բացի համաձայնեցված բնութագրերից, անհրաժեշտության դեպքում նաև՝ <ul style="list-style-type: none"> ○ Մատակարարը պետք է հետևի արտադրության պատշաճ պրակտիկային (ԱՊՊ) և հիգիենայի պատշաճ պրակտիկային (ԶՊՊ), և ○ Մատակարարը պետք է ապահովի սննդի անվտանգության ուղեցույցների, ներառյալ (առանց սահմանափակումների) ռիսկերի գնահատման առկայությանը: • Որակի և սննդի անվտանգությանն առնչվող բոլոր միջադեպերը, որոնք հանգեցնում են պատվերների առաքման հետաձգմանը, պետք է անմիջապես հաղորդվեն Գնորդին: <p>Նոր/փոփոխված ապրանքների փորձարկումների անցկացման համար պատասխանատու կողմը պետք է համաձայնեցվի կողմերի միջև՝ գրավոր:</p>	<p>4.1. GENERAL INSTRUCTIONS</p> <ul style="list-style-type: none"> • Local laws and requirements in all applicable jurisdictions (including but not limited to country of production and country of delivery) must be observed. • Quality and the general safety of goods must be according to agreed specifications. • The traceability of the goods must be guaranteed at all times (see Traceability). • In addition to the agreed specifications, and where relevant: <ul style="list-style-type: none"> ○ good manufacturing practice (GMP) and good hygiene practice (GHP) is to be followed by the Supplier; and ○ food safety guidelines, including (without limitation) risk assessment need to be in place. • All incidents concerning quality and food safety resulting in delayed delivery of orders must be reported immediately to Buyer. <p>Party responsible for carrying out performance test of new/changed goods shall be agreed between the parties in writing.</p>
<p>4.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԶՊՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՓԱՏԱԹՂԹԱԿՈՐՈՒՄ</p> <ul style="list-style-type: none"> • Մատակարարն ապրանքները Գնորդին կմատակարարի համապատասխան մատակարարման պայմանագրում նշված տեխնիկական պայմանների և կատարողականի չափանիշների համաձայն, քանի որ դրանք կարող են ժամանակ առ ժամանակ թարմացվել, ինչպես կառաջարկի Գնորդն: • Մատակարարներին չի թույլատրվում փոփոխել բնութագրերը և/կամ կատարողականի չափանիշները: Ենթադրյալ փոփոխությունների դեպքում Գնորդն պետք է տեղեկացվի և գրավոր հաստատված լինի վերջինիս կողմից՝ նախքան վերանայված բնութագրերով և/ կամ կատարողականի չափանիշներով ապրանքի մատակարարումը: • Անվտանգության անձնագրերը (եթե կիրառելի է՝ համապատասխան օրենսդրության համաձայն) պետք է տրամադրվեն Մատակարարի կողմից: 	<p>4.2. SPECIFICATIONS, PERFORMANCE CRITERIA AND DOCUMENTATION</p> <ul style="list-style-type: none"> • Supplier will supply the goods to the Buyer in accordance with the specifications and performance criteria set out in the relevant supply contract, as these may be updated from time to time as shall be advised by Buyer. • Suppliers are not permitted to change the specifications and/or performance criteria; if case of proposed changes, these need to be notified to Buyer and approved in writing prior to any delivery of goods with revised specifications and/or performance criteria. • Safety Data Sheets (where applicable under relevant law) are to be shared by Supplier.



Գործողության վայր/ Place of scope: ԳԳ, ք. Երևան/ Yerevan, RA
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<ul style="list-style-type: none"> • Մատակարարը պետք է ներկայացնի սննդի պիտանիության մասին հայտարարություն (համապատասխանության հայտարարագիր) որպես համապատասխանության/ համաձայնության հավաստագրման մաս՝ նախքան համագործակցությունը: • Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր խմբաքանակի դեպքում (յուրաքանչյուր առաքման համար) կիսվել վերլուծության հավաստագրով և համապատասխանության/ համաձայնության ընդհանուր հավաստագրով՝ յուրաքանչյուր տարի մեկ անգամ՝ ապրանքի հատկանիշների փոփոխությունների բացակայության պայմանով (հավաստագրի տեսակը պետք է համաձայնեցվի կողմերի միջև): • Որակի ընդունելի մակարդակները (ՈԸՄ) ապրանքների համար պետք է ներառվեն կատարողականների չափանիշների նկարագրության մեջ: 	<ul style="list-style-type: none"> • Supplier has to provide statement of food suitability (declaration of conformity) as part of the certification of compliance / conformity prior to commencement of collaboration. • Supplier has to share certificate of analysis per batch (with each delivery) and general certificate of compliance / conformity once a year under the condition that there are no changes to the goods specification (type of certificate to be agreed between the parties). • Acceptable Quality Levels (AQL) for the goods shall be included in the performance criteria description.
--	---

4.3. ՊԱՅՏԱՏԱԿՈՐՈՒՄ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄ	4.3. STORAGE & TRANSPORTATION
--	--

<ul style="list-style-type: none"> • Փոխադրման ընթացքում ապրանքների համար պատասխանատվությունը սահմանվում է գրավոր: • Զիմիական ազդեցության ենթարկված պալետների կիրառումն արգելվում է: • Հումքը, ինչպես նաև առաջնային և երկրորդային նյութերը պետք է տեղափոխվեն դիմացկուն անթափանց կապարակնիքներով: • Գնորդի ապրանքը չի թույլատրվում պահեստավորվել երրորդ կողմի ապրանքների հետ միասին, որոնք չեն համապատասխանում սննդի անվտանգության պահանջներին և (կամ) կարող են որակական ազդեցություն ունենալ (հատկապես համահոտային) Գնորդի ապրանքի վրա: • Ապրանքները չի թույլատրվում պահեստավորել կամ առաքել ուժեղ հոտավետ նյութերի հետ միասին՝ խաչաձև աղտոտումը կանխելու համար: • Հումքի, առաջնային և երկրորդային նյութերի համար պետք է պահպանվեն Մատակարարի կողմից սահմանված պահպանման և տեղափոխման պայմանները: • Առաջնային և երկրորդային նյութերի դեպքում, երբ Մատակարարը չի սահմանում պայմանները, պետք է պահեստավորել/փոխադրել 11°C ջերմաստիճանում՝ առավելագույնը 30°C ջերմաստիճանում և պաշտպանել արևի ուղիղ ճառագայթներից և խոնավությունից: • Պատրաստի ապրանքների համար պետք է պահպանվի 11°C ջերմաստիճանը- առավելագույնը՝ 30°C: Արգելվում է սառեցնել: Պատրաստի ապրանքները նույնպես պետք է պաշտպանված լինեն արևի ուղիղ ճառագայթներից և խոնավությունից: 	<ul style="list-style-type: none"> • The responsibility for the goods during transportation needs to be defined in writing. • Chemically treated pallets are prohibited. • Raw materials as well as primary & secondary materials need to be shipped with tamper proof seals. • Buyer goods are not allowed to be stored together with third party goods, which do not comply with the food requirements and/or could have a qualitative impact (especially sensory) on the Buyer goods. • The goods are not allowed to be stored or delivered together with strong smelling materials, to prevent a cross-contamination. • For raw, primary and secondary materials the storage and transport conditions, defined by the Supplier, are to be adhered to. • For primary and secondary materials, where Supplier does not define the conditions, store/transport at 11°C – max.30°C and protected from direct sunlight and humidity. • For finished goods a temperature range from 11°C – max.30°C is to be adhered to. Freezing is prohibited. Finished goods are also to be protected from direct sunlight and humidity.
--	---

4.4. ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻՆ ԳԵՏԱԵԼՈՒ ԴՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	4.4. TRACEABILITY
<p>4.4.1. Գնորդի պահանջով ցանկացած պահի, ընդունելի ժամանակահատվածում (2-3 ժամ) Մատակարարի կողմից պետք է ներկայացվեն հետևյալ տվյալները.</p> <ul style="list-style-type: none"> • Ապրանքի խմբաքանակի կամ միևնույն պիտանելիության ժամկետով ապրանքի նույնականացում, • Երկկողմանի գտնվելու վայրին հետևելու հնարավորություն (մատակարարման շղթայում մեկ քայլ առաջ և հետընթաց), • Պահեստի մնացորդին 100% հետևելու հնարավորություն: 	<p>4.4.1. At any time upon Buyer's request, within an acceptable period of time (2 - 3 hours) the following data must be provided by the Supplier:</p> <ul style="list-style-type: none"> • Identification of good batch or the production with the same "best-before-date"; • Two-way-traceability (one step forward and backwards in the supply chain); • Possibility to trace 100% of the stock.
<p>4.4.2. Գտնվելու վայրին հետևելու հնարավորությունն ապահովելու համար նվազագույնն անհրաժեշտ է հետևյալ տեղեկատվությունը.</p> <ul style="list-style-type: none"> • Նյութի համարը, • ԲԲՄԾ կոդ կամ խմբաքանակի նույնականացման որևէ այլ կոդ, • Լոտի համարը, արտադրության ամսաթիվը կամ պիտանելիության ժամկետը, • Նյութի քանակը, • Առաքման ամսաթիվը, <p>Անհրաժեշտության դեպքում ուղարկման ամսաթիվը:</p>	<p>4.4.2. To ensure traceability the following information as a minimum is needed:</p> <ul style="list-style-type: none"> • Material Number; • SSCC Code or any other batch identification code; • Lot-number, production date or best-before-date; • Quantity of material; • Date of delivery; <p>If needed, date of dispatch.</p>
4.5. ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ	4.5. INCOMING GOODS VISUAL INSPECTION
<p>4.5.1. Գնորդն պետք է ներմուծված ապրանքների առաքումից հետո իրականացնի տեսողական զննություն՝ իր ներքին զննության գործընթացին համապատասխան:</p> <p>4.5.2. Պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.</p> <ol style="list-style-type: none"> 1. Առաջնային և երկրորդային նյութեր մատակարարող տրանսպորտային միջոցների վրա ստուգել անթափանց կապարակնիքների ամբողջականությունը: 2. Ստուգել առաքման փաստաթղթերը՝ ապահովելու կապարակնիքի մանրամասների ճշգրտությունն առաքման փաստաթղթերում: 3. Ստուգել առաքվածի քանակն ու ամրագրել համակարգում: 4. Գնորդի կողմից անհամապատասխանության հայտնաբերման դեպքում Մատակարարի հետ պետք է կապ հաստատել հայտնաբերումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: 5. Վնասված ապրանքները կհավաքագրվեն, և կփաստաթղթավորվեն, որի մասին կտեղեկացվի Մատակարարին, որպեսզի կարգավորումը կատարվի համաձայն համապատասխան մատակարարման պայմանագրի: 	<p>4.5.1. The Buyer will carry out a visual inspection of incoming goods upon delivery in line with its internal inspection process.</p> <p>4.5.2. The following steps will be carried out:</p> <ol style="list-style-type: none"> 1. Check the integrity of tamperproof seals on vehicles delivering ingredients, primary and secondary materials. 2. Check delivery documents, ensuring seal details are correct on delivery documents. 3. Check delivered quantities and book into system. 4. In case of any differences identified by Buyer, Supplier will be contacted within 3 working days of identification. 5. Damaged goods will be sorted out, documented and reported back to Supplier, so that the settlement can take place in accordance the relevant supply contract.

4.6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	4.6. NON-CONFORMING GOOD MANAGEMENT
<p>4.6.1. Մատակարարը պետք է տեղեկություններ տրամադրի Գնորդին ապրանքի ցանկացած անհամապատասխանության մասին Մատակարարի անունից հաղորդումներ ներկայացնելու իրավասություններ ունեցող անձի մասին:</p> <p>4.6.2. Վերլուծության համար թույլատրվում է օգտագործել միայն հավաստագրված և համաձայնեցված լաբորատորիաները: ԿԿԸ ՈԸՄ-ն կիրառվում է համապատասխան ապրանքների համար:</p> <p>4.6.3. ՈԸՄ-ների անհամապատասխանության դեպքի առթիվ ձեռնարկվելիք գործողությունները/ միջոցները պետք է գրավոր համաձայնեցվեն Մատակարարի և Գնորդի միջև՝ համաձայն մատակարարման համապատասխան պայմանագրի դրույթների:</p> <p>4.6.4. Թերի ապրանքները, որոնք չեն համապատասխանում տեխնիկական բնութագրերին կամ կատարողականի չափանիշներին, կարող են լինել ստորև նշված պատճառներից (բայց սահմանափակվելով).</p> <ul style="list-style-type: none"> • Տեղադրվել է մեքենաներում առանց համապատասխան դիմացկուն անթափանց կապարակնիքի կամ խախտվել է դիմացկուն անթափանց կապարակնիքի ամբողջականությունը: • Վնասված և/կամ աղտոտված ապրանքներ: • Արտահոսող տարաներ: • Երկրորդական փաթեթավորման համար չհամապատասխանող, նույնիսկ եթե բնութագրերի սահմաններում է: • Վնասված պալետներ, փաթեթավորում (տարա, ստվարաթղթե տուփ և այլն): <p>Ապրանքներ, որոնք գերազանցել են պիտանելիության ժամկետը:</p>	<p>4.6.1. The responsible person within the Supplier to report any non-conformity of goods to Buyer is to be notified by the Supplier to Buyer.</p> <p>4.6.2. For analysis only certified and agreed upon laboratories are allowed to be used. TCCC AQL for relevant goods shall apply.</p> <p>4.6.3. Actions/measures to be taken in the case of an incident of non-conformity of the AQLs are to be agreed in writing by the Supplier and Buyer, subject to the provisions of the relevant supply contract.</p> <p>4.6.4. Defective goods, not conforming to the specifications or performance criteria, can be indicatively, but not limited to:</p> <ul style="list-style-type: none"> • Delivered in vehicles without appropriate tamper proof seal or integrity of tamper proof seal has been compromised. • Damaged and/or soiled goods. • Leaking containers. • Not fit for purpose secondary packaging, even if within specifications. • Damaged pallets, package (container, carton box, etc). • Goods that have exceeded the remaining shelf life.
<p>4.6.5. Թերի ապրանքների համար անհամապատասխան ապրանքի կառավարման պատշաճ ընթացակարգը հիմնականում կախված է համապատասխան քանակությունից և թերության տեսակից (ՈԸՄ):</p> <p>4.6.6. Ստորև նկարագրությունները լրացնում են և/կամ ԿԿԸ ՈԸՄ-ների կամ ԿԿԸ-ի յուրաքանչյուր տեսակի ապրանքի համար (հումք/փաթեթավորման նյութեր) Մատակարարի պահանջների համառոտագրին, եթե տեղական համաձայնագիր չկա, և բոլոր ԿԿԸ պահանջները կիրառվում են և գերակայում են տարրնթերցումների դեպքում:</p>	<p>4.6.5. The appropriate non-conforming good management procedure for defective goods depends primarily on the quantities concerned and the type of defect (AQL).</p> <p>4.6.6. The below descriptions are supplemental to and/or a brief overview of the TCCC AQLs or TCCC supplier requirements for each type of good (raw material/packaging material) where no local agreement exists and all TCCC requirements apply and supersede in case of deviations.</p>
<p>4.6.7. Թերության 1 կարգ (սննդի անվտանգության համապատասխանություն).</p> <ul style="list-style-type: none"> • Միջամտության տեսանելի նշաններ կամ վնաս ավտեմեքենայի վիճակի պատճառով, • Տեսանելի մանրէաբանական ինդիք, 	<p>4.6.7. Defect category 1 (food safety relevance):</p> <ul style="list-style-type: none"> • Visible signs of tampering or damage due to vehicle condition; • Visible microbiological problem; • Foreign matter in raw material;

